ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ի՞նչ է թերապևտիկ լայնությունը:**

1) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև նվազագույն թունավորը
2) դոզաների միջակայքն է՝ առավելագույն թերապևտիկից մինչև առավելագույն թունավորը
3) դոզաների միջակայքն է՝միջին թերապևտիկից մինչև մահացու /լետալ/ դոզան
4) դոզաների միջակայքն է՝ նվազագույն թերապևտիկից մինչև նվազագույն տոքսիկը

2 **Ի՞նչ է բորբոքումը:**

1) բարդ քիմիական պրոցես է, որը զարգանում է վնասված հյուսվածքներում
2) օրգանիզմի բարդ ռեֆլեկտոր ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է տեղային և ընդհանուր փոփոխությունների համալիրով
3) օրգանիզմի բարդ հումորալ ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է անոթների տեղային խանգարումների համալիրով
4) տեղային նյութափոխանակության խանգարում է, որն առաջանում է հյուսվածքների վնասման հետևանքով

3 **Բազմաշերտ տափակ էպիթելով մաշկի ո՞ր շերտն է ձևավորվում:**

1) դերմա
2) էպիդերմիս
3) պտկիկային
4) ցանցային

4 **Որքա՞ն է տևում մաքիի հղիությունը:**

1) 3 ամիս
2) 5 ամիս
3) 2 ամիս
4) 4 ամիս

5 **Նշվածներից ո՞րը հելմինթոօվոսկոպիկ մեթոդ չէ:**

1) Տրիխինելոսկոպիայի
2) Ֆյուլեբոռնի
3) Վայդի
4) Բերմանի

6 **Ինչպե՞ս է կոչվում հաստ աղիքներում կերազանգվածի կանգը:**

1) խիմոստազ
2) կոպրոստազ
3) հեմոստազ
4) լիմֆոստազ

7 **Նշված հորմոններից ո՞րն է արտադրվում մակերիկամի ուղեղային շերտում:**

1) կորտիզոն
2) տեստոստերոն
3) ադրենալին
4) ալդոստերոն

8 **Ի՞նչ է տեղի ունենում սիմպաթիկ նյարդային համակարգի գրգռման դեպքում:**

1) ստամոքսի հյութազատության նվազում
2) ադրենալինի արտադրության նվազում
3) աչքի բբի նեղացում
4) սրտի աշխատանքի դանդաղում

9 **Նշել որոճողների կրծքային վերջավորությունների հոդերի տեղադրման ճիշտ հաջորդականությունը:**

1.արմունկ, 2.կապ, 3.պսակ, 4.դաստակ

1) 1, 4, 2, 3
2) 4, 2, 3, 1
3) 1, 2, 3, 4
4) 2, 1, 4, 3

10 **Ի՞նչ է արյունուռուցքը /հեմատոման/:**

1) ավշային անոթի պատռվածքից գոյացած ավշի կուտակումն է, որի դեպքում պահպանված է մաշկի ամբողջականությունը
2) հյուսվածքների ներծծումն է շճային էքսուդատով, առանց մաշկի ամբողջականության խախտման
3) հյուսվածքների մեխանիկական վնասվածք է, որի դեպքում տեղի է ունենում արյունազեղում և արյունով լցված խոռոչի գոյացում
4) մաշկի և ենթամաշկային բջջանքի փակ վնասվածքն է, որի դեպքում պատռվում են արյունատար և ավշային անոթները և գոյանում են արյունուռուցքներ

11 **Ինչպիսի՞ բիլիռուբին է հայտնաբերվում մեխանիկական դեղնախտի դեպքում. (1 միավոր)**

1) բիլիվերդին
2) ուղղակի և անուղղակի
3) անուղղակի
4) ուղղակի

12 **Ի՞նչ է պնևմոթորաքսը:**

1) թոքամիզում օդի կուտակում
2) թոքամիզում արյան կուտակում
3) թոքամիզի բորբոքում
4) թոքամիզի ջրգողություն

13 **Ինչպե՞ս է կոչվում արգանդի շճային թաղանթի բորբոքումը:**

1) պերիմետրիտ
2) պարամետրիտ
3) էնդոմետրիտ
4) միոմետրիտ

14 **Տվյալ ցեղի մայրերի կենդանի զանգվածի քանի՞ տոկոսի ձեռք բերման դեպքում է կենդանին համարվում մարմնապես հասուն:**

1) 30%
2) 20%
3) 50%
4) 70%

15 **Ինչպե՞ս է կոչվում ստամոքսի լորձաթաղանթի բորբոքումն:**

1) մետրիտ
2) գաստրիտ
3) կոլիտ
4) էնտերիտ

16 **Նշվածներից ո՞րը *չի* համարվում սրտի հիվանդությունների ախտորոշման եղանակ:**

1) էնդոսկոպիկ
2) գրաֆիկական
3) ռադիոլոգիական
4) ուլտրաձայնային

17 **Ինչպե՞ս է կոչվում հաճախակի միզարտազատումը:**

1) պոլիուրիա
2) պոլակիուրիա
3) օլիգուրիա
4) անուրիա

18 **Ինչպիսի՞ աղմուկներն են հայտնաբերվում ներսրտենու բորբոքման ժամանակ:**

1) պլևրալ
2) կարդիոպուլմոնալ
3) պերիկարդիալ
4) էնդոկարդիալ

19 **Ի՞նչ է իրենից ներկայացնում խոլանգիտը:**

1) լեղաքարերի առաջացում
2) լեղածորանների ուռուցք
3) լեղապարկի բորբոքում
4) լեղածորանների բորբոքում

20 **Ի՞նչ է ցույց տալիս էրիթրոցիտների օսմոտիկ կայունությունը:**

1) լեյկոցիտների ակտիվությունը
2) էրիթրոցիտների ակտիվությունը
3) էրիթրոցիտների կյանքի տևողությունը
4) ոսկրածուծի ֆունկցիոնալ կարողությունը

21 **Նշվածներից որո՞նք են մեղուների մակաբուծային հիվանդությունները: (3 միավոր)**

1. պիեմիա
2. ամեբիոզ
3. ասպերգիլոզ
4. ասկոսֆերոզ
5. վիրուսային կաթված
6. նոզեմատոզ
7. ակարապիդոզ
8. վարոատոզ
9. հաֆնիոզ

22 **Նշված եղանակներից որո՞վ կարելի է ախտորոշել վարակիչ հիվանդությունները: (3 միավոր)**

1. գործիքային
2. ռենտգենաբանական
3. ֆունկցիոնալ
4. ուլտրաձայնային
5. շիճուկաբանական
6. վիրուսաբանական
7. գծագրական
8. շոշափման
9. մանրէաբանական

23 **Նշվածներից որո՞նք են կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունները: (3 միավոր)**

1. լեպտոսպիրոզ
2. լիստերիոզ
3. կատաղություն
4. սիբիրախտ
5. աֆրիկյան ժանտախտ
6. խշխշան պալար
7. բրադզոտ
8. ոչխարների ծաղիկ
9. ոչխարների ինֆեկցիոն կատառային տենդ

24 **Նշվածներից որո՞նք են դեղանյութերի ներմուծման էնտերալ ուղին: (3 միավոր)**

1. ներսրտային
2. ներմկանային
3. բերանային
4. ենթալեզվային
5. ենթամաշկային
6. ուղիղ աղիքային
7. վերմաշկային
8. ներերակային
9. ներզարկերակային

25 **Նշվածներից ո՞ր 3 հիվանդություններն են հողային ինֆեկցիա: (3 միավոր)**

1. բրուցելոզ
2. ժանտախտ
3. գազային գանգրենա
4. կարկամախտ
5. դաբաղ
6. խոզերի կարմրախտ
7. գեղձատապ
8. բոտուլիզմ
9. սպունգանման հիվանդություն

26 **Ընտրել խշխշան պալարին բնորոշ մսեղիքի հետ վարվելու 3 ճիշտ պնդումները: (3 միավոր)**

1. Մսեղիքը օգտագործում են ախտահարված հատվածները հեռացնելուց հետո:
2. Մսեղիքը ապխտում են:
3. Հիվանդ կենդանուն սպանդի *չեն* ենթարկում:
4. Հիվանդ կենդանուց ստացված մսեղիքը օգտահանում են այրելու միջոցով:
5. Մսեղիքը օգտագործում են 2 ժամ ջերմային մշակումից հետո:
6. Մսեղիքը օգտագործում են 30 օր խորը սառեցումից հետո:
7. Մսեղիքը ուղարկում են վերամշակող ձեռնարկություն:
8. Կատարում են նմուշառում և ուղարկում լաբորատորիա:
9. Մսեղիքը օգտագործում են առանց սահմանափակումների:

27 **Որո՞նք են միզային համակարգի հիվանդությունների համախտանիշները: (3 միավոր)**

1. միզային
2. էոզինոֆիլիա
3. ուրեմիկ
4. կոլիկներ
5. հեպատոլինեալ
6. դեղնախտ
7. այտուցային
8. նեյտրոֆիլիա
9. հեպատոտոքսիկ

28 **Նշվածներից որո՞նք են լեյկոցիտների տեսակները: (3 միավոր)**

1. ռետիկուլոցիտ
2. մակրոֆագ
3. լիմֆոցիտ
4. մոնոցիտ
5. պոյկիլոցիտ
6. էոզինոֆիլ
7. անիզոցիտ
8. հեպատոցիտ
9. ֆիբրոբլաստ

29 **Նշել կենտրոնական նյարդային համակարգը գրգռող դեղամիջոցները: (3 միավոր)**

1. անալգին
2. անեսթեզին
3. ստրիխնին
4. պարացետամոլ
5. կոֆեին
6. ցեֆտրիաքսոն
7. լիդոկային
8. կորդիամին
9. նովոկային

30 **Նշել կրուպոզ պնևմոնիային բնորոշ 3 ախտանշանները: (3 միավոր)**

1. թոքերում բթացման սահմանափակ օջախների առկայություն
2. բթության հորիզոնական գիծ
3. կայուն տենդ
4. ընդմիջվող տենդ
5. պլևրալ աղմուկների առկայություն
6. էնդոկարդիալ աղմուկ
7. խառը հևոց
8. արտաշնչական հևոց
9. թոքերում բթացման մեծ օջախների առկայություն